Հրանտ Մաթևոսյան

Մշակույթի պատասխանատվությունը աշխարհի ճակատագրի մեջ վիթխարի է

Հանդիպում ԵՊՀ-ում, 1984 թ. սեպտեմբերի 28

Հր. Մաթևոսյան – ...Կարող եմ հինգ րոպե խոսել, կարող եմ մինչև կյանքիս վերջը խոսել և ինձ հուզող հարցերի պատասխանը էդպես էլ չգտնել...
Բայց եթե կարճ ասեմ՝ իմ անմիջական տպավորությամբ, ֆոտոտպավորությամբ, ինքնաթիռի ձախ թևից երևում էր Թալինի հողը,– երևի Թալինինն էր, չգիտեմ,– իմ ուշքը դեռ Կազբեկների վրա էր, ես կարծում էի, թե հերթով երկիրը պիտի տեսնեմ, մեկ էլ տեսնեմ Արագածը անցնում ենք և՝ քայքայվա՛ծ, աղքաա՜տ, ճանապարհների ոստայնի տակ կորած՝ և՛ քաղաքակրթությամբ, և՛ պատմությամբ, և՛, ես ինչ գիտեմ, քիմիայով,– դարերով քայքայվա՜ծ, աղքա՛տ հողը. ես քիչ եմ ասում... եթե դրա ֆոտոգրաֆը-արձանագրողը ասեք. դարձյալ շնորհակալ կլինեմ...
Ինչից սկսեմ, ասեք՝ սկսեմ...
Սկսեմ նրանից, ինչից պիտի սկսեի:
Շնորհակալություն էդ հնարավորությունը ընձեռողներին, որ Վիլյամ Սարոյանի հետ նստել էինք նույն մեքենայի մեջ և Գառնի-Գեղարդ էինք գնում: Ասավ՝ Հրանդ Մաթևոսեան, դուն որ գրեցիր, ինչ ցանկությունով սկսեցիր գրել: Ես չհասկացա, թե ինչ է ասում: Ինքը ասավ՝ երբ ես սկսեցի գրել, կկարծեի, կմտածեի, թե աշխարհը պիտի շրջեմ: Որովհետև ժամանակը աշնան էր և տուրիստների փաստական տպավորության տակ էի, կարծում էի, թե «շրջել» աշխարհի վրա՝ ման գալու մասին է: Չգիտեի, որ հեղաբեկելու և կյանքի

ընթացքը առհասարակ շուռ տալու մասին է: Հետո սկսեցի հասկանալ, տեսա, որ ազատ երկրի ազատ քաղաքացին իր կարծիքների մեջ է. ազատ քաղաքացին կարող է իսկապես աշխարհը հեղաբեկելու, աշխարհի ընթացքը շրջելու մասին խոսել: Իմ ցան-կությունները էդքան ագրեսիվ չէին...
Սարում հորս հետ խոտ էինք հնձում: Հետո հոգնած էինք: Էդպես լավ տարիք էր իսկապես: Ընկերոջ պես էինք: Ինքը մոտ հիսուն տարեկան էր, ես՝ քսաներեք, ես՝ ընդամենը քսաներեք տարեկան: Ընկերության տարիք էր: Հոգնած սարից գալիս էինք: Էդ ժամանակ էլ կոլխոզը սովխոզացնում էին: Էնպես, կոլտնտեսականների ունեցվածքը մի քիչ պիտի խուզեին... Էնքան խուզեցին, և նրանք էնքան զզվեցին ունեցվածքից, որ հիմա նրանց խնդրում են անասուն պահել, և նրանք չեն պահում: Ասում են՝ ինչո՞ւ պահենք, որ... Դուք պահեք, մենք էլ ուտենք...
Դեռ տպավորությունները թարմ էին, դեռ մասնավոր սեփականության քաղցրությունը բերաններում էր՝ երբ ձի ունես ու ձիդ սիրում ես, կով ունես, հորթ ունես... Դեռ նոր էին զրկվել էդ բոլորից և արտասվում էին էդ կորուստների համար: Ձին, իր ձին տարել էր, ձին ստիպված տարել էր, մի երկու կոպեկով տվել էր ուրիշ գյուղ: Հետո, ձին ծնելու վրա ետ էր եկել: Ասում է՝ ձին որ եկել դռանը կանգնել էր, հերս, որ մի քիչ, էդպես, կոշտ մարդ էր, սենտիմենտների տրվող մարդ չէր, ասում է՝ մորս ներկայությամբ լաց եղավ... Ասում էր՝ ձիս էլ ետ չեմ տա... Բայց ձիուց զրկվել էր... Ասի՝ ես կգրեմ, և թույլ կտան դարձյալ ձի պահել: Էսպես, կասկածով նայեց, թե՝ էդ դու էդ ո՞վ ես, որ կանոնադրությունը փոխես, կոլխոզային օրինակելի կանոնադրությունը փոխես և ինձ ձի տաս... Իսկապես, ամենաագրեսիվ ցանկությունս, ամենասրված ցանկությունս, ինչքան որ գրել եմ, էդ է եղել՝ որ հորս ձին վերադարձնեն: Դա դարձավ, իմ կարծիքով սովորական, մի ակնարկի հենք ու հիմք, և ինձանից ավելի վախկոտները ակնարկը նշանավոր դարձրին՝ նրա շուրջ իրենց մտածած բոլոր բաները վրա դնելով... Դա եղավ նշանավոր «Ահնիձոր» ակնարկը, որ իմ գլխին և կրակ դարձավ, և միաժամանակ ինձ՝ գրականության էսպես կոչված առաջին պլան մղեց... ես պիտի լինեի երրորդ, գրողների ավելի ապահով, չնկատված շարքերում... Եվ կարող էի իմ ընտանիքի հոգսերը հեշտ ու հանգիստ ապահովել՝ կնոջը հագցնել, երեխաներին սիրուն պահել, դես-դեն... Էդպես մի քիչ ավելի բարվոք վիճակ կլիներ... Ինչևէ: Ինչ եղել է՝ եղել է, չեմ զղջացել...
Ինչից սկսեմ, ասեք՝ սկսեմ. դեռ չեմ սկսել:

Ծնվել եմ գոմում: Ժամանակը աղքատ է եղել, և ծնվել եմ գոմում, գոմում եմ ծնվել... Էդ իմ վիպակներից մեկի մեջ կա: Գոմի վերևի մասը տվել են մեզ՝ հորս, մորս, նոր ծնված Հրանտ Մաթևոսյանին, ներքևի մասը տվել են գոմեշներին: Իմ գոմեշին գուցե էդտեղից եմ վերցրել: Գոմեշի մասին գուցե երբևիցե գրեմ: Չգիտեմ...

Հետո մերս ամեն անգամ փախչում էր, չէր ուզում նոր կյանքին՝ էստեղ, հարմարվի, որովհետև, իր պատկերացմամբ, էն հեռու քաղաքային գյուղում, Սանահին գյուղում, մի քիչ լուսավոր կյանք կար: Ինքը չէր ուզում էս խուլ գյուղի աղքատ կյանքի հետ հաշտվի. ամեն անգամ փախչում էր... Եվ խեղճ հերս ամեն անգամ, էդ տգեղ, հա՞, երեխային գրկած... որ ասեմ՝ փոքր ժամանակ սիրուն եմ եղել... Գրողների միությունում մի Եպրաքսյա կար: Գիժ էր... Բայց շատ լավ կին էր: Ասում էր՝ փոքր ժամանակ ես շատ սիրուն եմ եղել, ինձ օրորոցում փոխել են...

Փոքր ժամանակ գուցե սիրուն եմ եղել, գուցե տգեղ եմ եղել, չգիտեմ, բայց էդ տգեղ խանձարուրը գրկած խեղճ հերս հարևան բոլոր կրծքավոր կանանց մոտ է գնացել... Այո, երեխա ունեցող կանանց մոտ է գնացել, և նրանք ինձ կերակրել են: Էդտեղից եմ, նրանք խմբով իմ մայրն են եղել...

Պատերազմը տղամարդկանց քչացրեց, և զարմանալիորեն գյուղի համայնքի մարդիկ իրար կապվեցին: Իմ տպավորությամբ էնպես էր, որ բոլորը բոլորի հայրերն էին և բոլորը բոլորի մայրերն էին: Էդպիսի գեղեցիկ համայնք էր ստեղծվել, առաջացել. սիրո մթնոլորտ էր: Կամ ես էի պոետ, կամ մինչ հիմա էլ պոետ եմ և կարծում եմ, որ էդպիսի մի հանրություն եղել է: Բոլոր դեպքերում իրենք էդ հնարավորությունը տվել են, որ ես մտածեմ, որ իսկապես դա սիրով կապված համայնք էր... Այդ համայնքի տարեգիրն եմ ջանում ես ինձ ներկայացնել... Կարող եմ պատահական դեպքեր հիշել իմ կյանքից ու ասել, թե գրականությունից ինչ եմ սիրում: Վերջը, մի խոսքով, ես իրենց զավակն եմ, էդ աղքատ ծնողների զավակն եմ, գրկված, որբևայրի կանանց զավակը...

Հետո արդեն ես շատ պատմություններ եմ տեսել, շատ ճոխ սեղանների եմ ներկա եղել, բոլոր դեպքերում հավաքել եմ էն, ինչ ինձ ներքուստ հարազատ է եղել...

Աներս՝ կնոջս հայրը, իրենց գյուղացի մի գեղեցիկ գոյության՝ Գերասիմ Աթաջանյանի մասին, մի հերոսական գոյության մասին պատմեց: Գերասիմը պոնձահանքերի մի սովորական վարպետ է եղել, ֆրանսիացիների հետ շփվելով՝

մի քիչ ֆրանսերեն իմացող, ֆրանսերեն գիտցող, մի աչքը կույր, հատ ընկած և էդ պատճառով էլ չզորակոչված... Բայց երբ Բաթումի խորհրդակցությունից հետո Հայաստանին տասը հազար քառակուսի կիլոմետր տեղ տվեցին, երբ բոլոր կողմերից ժողովրդին խցկում էին էս փոքր վանդակը,– հիմա մենք երեսուն հազար կիլոմետր ունենք,– Զանգեզուրի ժողովուրդը դիմադրել է, իսկ Ղափանում դիմադրել է Գերասիմ Աթաջանյանի ղեկավարությամբ: Առանց նշանավոր զորավարների կարողացել ենք նույնիսկ մի երկու տեղ ճակատամարտ տալ, համենայն դեպս Ղափանի շրջանը էսօր Հայաստանի տարածության մեջ է: Հետո ինքը նահանջել է, Փարիզ է գնացել, հետո կապերը կտրել է, գիտի, որ այլևս էստեղ ինքը ետդարձի ճանապարհ չունի: Բայց երեխան հիվանդացել է մի հիվանդությամբ, որ մենք բոլորս՝ մի քիչ օտար բառեր սիրող, ասում ենք նոստալգիա, նոստալջիք հիվանդությամբ է հիվանդացել, այսինքն՝ հայրենախտ հիվանդությամբ, որը կբուժվի կամ չի բուժվի միայն հայրենիքի լեռներում: Էս մարդը ստիպված է եղել երեք տարի շարունակ, երեխայի հասունացման տասնհինգ-տասնվեց-տասնյոթ տարիներին, թաքուն սահմանը անցկացնել և երեխային բերել Զանգեզուրի լեռներում բուժելու: Վերջին ետդարձի ժամանակ ինքը Արաքսում խփվել է, երեխան մեծացել է, վերադարձել է էստեղ, հիմա ապրում է Լուսակերտում: Գերասիմ Աթաջանյանը հայրենիք է պահել և ահա կտակել է ինձ: Ասում եմ՝ էդ աղքատների՛, էդ հերոսների՛, էդ դժվար կյանքի՛ ժառանգն եմ: Ուզում եմ նրա՛նց մասին պատմել: Ուզում եմ նրա՛նց գրողը լինել: Ուզում եմ նրա՛նց ձայնագրողը լինել: Եվ իհարկե, գրականության մեջ էլ պիտի ջոկեի, իմը համարեի էն, ինչը նրանց մասին է կամ մոտավորապես նրանց մասին է: Եվ իհարկե, շքեղ գրքերից, Աստվածաշնչից ու էնցիկլոպեդիաներից ավելի պիտի տեսնեի Ղուկասի վկայությունը Սիմոնի մասին, Սիմոնի, որ հանդից գալիս էր և կուզենար, որ ոտքերը մեկը լվանար և ինքը հիմա քնած լիներ թեկուզ շալակի տակ, ծանր բեռան տակ... Բայց նրա բեռը նրա ուսերից իջեցրին, խաչը նրա շալակը տվին, թե՝ դու լավ բեռնակիր ես, լավ համբալ ես, լավ կլինի, որ Քրիստոսի խաչը դու հանես Գողգոթա, որովհետև իշխանների մեր ուսերը խաչի համար չեն, ինքը՝ Քրիստոսն էլ նիհար տղա է, չի կարող տանել: Ահա, էս Սիմոնի մեջքն էլ շատ հարմար է ուրիշի խաչը տանելու: Ավետարանում ես Ղուկասի Սիմոնին եմ նկատել...

Սքանչելի Ակսել Բակունցի «Տիգրանուհին» նովելում... Ո՞վ է կարդացել: Ո՞վ գիտի: Մեծ գրականություն է: «Տիգրանուհին» նովելում Վասիլը,– սրա կերպարը

պարոդիայով է արած ու մի քիչ էլ ոճավորած,– իբր թե Վասիլը օրագիր է պահել, Վասիլի օրագիրն է գտել Ակսել Բակունցը...
Էդվարդ Իսաբեկյան – Զարհուրելի բան է...
Հրանտ Մաթևոսյան – Հը՞... Ըհը՛: Մեծ գրականություն է: Վասիլի տգետ, տառասխալներով լի օրագիրը Տիգրանուհու մասին է: Աղջնակ է և պիտի աղջիկ դառնար, մի անգամ թեթև ժպիտի պես մի բան հայտնվեց նրա աչքերում, աղջկական ուրախություն հայտնվեց նրա մեջ... Ախպերը, մեծ ախպերը,– որբ է, չէ՞, ախպերը իբր թե վրան հեր պիտի լիներ, բայց հայր չի՝ բոլոր դեպքերում հորը-մորը ոչ ոք չի փոխարինում. ախպերն ախպեր է, ախպոր կինն էլ ախպոր կին է,– ահա ախպերը նրա համար կոոպերատիվից երևի, թե որտեղից, հա, կոոպերատիվներն էլ 36 թվից են Հայաստանում,– կոոպերատիվի խանութից կոշիկ էր առել նրա համար, որ հարևանի տանը բատրակություն էր անում, արտերում հասկ էր հավաքում: Եվ էդ կոշիկները պիտի տար էդ որբուկին: Եվ կանացիական-աղջկական առաջին ուրախությունը հայտնվում է նրա աչքերում և տեղնուտեղն էլ չքանում, որովհետև եղբոր կինը առնում է ձեռքից ու սնդուկում պահում է: Էս «Տիգրանուհին» եմ նկատել:
Կարող եմ «Խոնարհ աղջիկը» ասել, «Խոնարհ աղջիկը» վկայել: Կա՛: Մի անգամ թեթև սիրո նման մի բան էս աղջկա մեջ շաղախվեց-շաղախվեց-ցոլաց, երբ բեմի ետև,– գյուղական բեմ էին սարքել,– ձեռքը բռնեց, ասավ՝ «խոնարհս», ասավ՝ «թող», ու ձայնը դողաց: Էս Ակսելի մատնանշումներն են:
Սրանք իմ սիրած գործերն են:
Ասեմ, թե էն, ինչ գրում եմ, գրականության մեջ, հին գրականության մեջ բոլորովին չի արած, էնքան էլ ճիշտ չի լինի: Բայց բոլոր դեպքերում վերաբերմունքը էն չի, ինչ որ իմը պիտի լիներ... Էս նոր՝ կարեկցանքի գրականությունը բոլորովին նոր երևույթ է համաշխարհային գրականության մեջ: Հիմա կասեք «Պոնձե հեծյալի» խեղճ Եվգենին՝ Պուշկինի վերաբերմունքը, կամ «Շինելի» Ակակի Ակակիևիչը: Ճիշտ կանեք, որ կասեք: Բայց բոլոր դեպքերում դուք նայեք, որ նա իշխանի բարձրությունից է նայել և աղայական–барский վերաբերմունք կա առ էն խեղճը, որին միայն կարելի է կարեկցել, բայց նրան կարելի՞ է իշխանական սրահներն ընդունել որպես հավասար եղբոր, հետը հավասար նստել: Ո՛չ: Կասեք՝ շատ մոտեցար, մի քիչ հեռու գնա, ինչպես մեր Կենտկոմի քար-տուղարներից մեկն էր ասում՝ մոտիկ-մոտիկ լինենք, բայց որ շատ մոտենում էիր, ասում էր՝ շատ համը հանեցիր, մի քիչ հեռու գնա: Էդպես մի

բան կար: §Ñìåðòü Èâàíà Èëüè÷à¦* – հրաշալի, հիանալի, աշխարհի գրականության էդ գլուխգործոցի մեջ մի Գերասիմ կար, սպիտակ վերնաշապիկով, ասում է՝ áåëàÿ ðóáàøêà, ÷èñòûå ïðåêðàñíûå çóáû, âñåãäà ìèëàÿ** և ժպտում էր âñåãäà ãîòîâíîñòüþ***...
Եվ սա մաքրում էր Իվան Իլյիչի աղտեղությունները, որին թվում է, թե իր ոտքերը հանգիստ են զգում և իր սիրտը նույնպես հանգիստ է զգում, երբ իր ոտքերը Գերասիմի ուսին են: Ժամերով էդպես ոտքերը դնում Գերասիմի ուսերին ու նիրհում է էս մարդը: Բախտինը հրաշալի ընդգծումով ասում է, որ «§âíóòðè íå îñâåùåí¦ Գերասիմը: Իսկապես ներքուստ չի լուսավորված: Մնացել է §áåëàÿ ðóáàøêà,
ïðåêðàñíûå ÷èñòûå çóáû¦****:
Ու Գերասիմը՝ միշտ պատրաստակամ: Եթե ուզում եք ճիշտ իմանալ, Տոլստոյի վիթխարի պրոբլեմը հենց էդ է, որ գիտի, որ էսպիսի վերաբերմունք չի լինի, որ մեր վերաբերմունքն է առ գյուղացիությունը, բայց և չէր կարողանում էդ կապը կտրի... Մուրալը կարող է ընդունել, կարող է տալ, մի ռուբլի կարող էր տալ և հիսուն կոպեկ ետ ուզել, բայց որ էս կյանքը կործանի, իր և իր շրջապատողների կյանքը կործանի, կապանքները կտրի և ասի՝ ահա, եկեք, դուք սկյութներ եք, դուք վայրենիներ եք, դուք հեղափոխականներ եք, եկեք, մեր ապարանքները փլեք, որովհետև սա կյանք չի, էս հակադրությունների աշխարհը, էս աղայական շահագործման և, ես ինչ գիտեմ՝ ձեր խոնարհ շահագործման հանրությունը էն չի՛: Էդ չի անում: Կապերը դժվարությամբ կտրեց: Կամ թե չէ՝ չկարողացավ կտրել: Նոր վերաբերմունք էր դա:
Հիմա կարծես ծանոթ սցենարով եմ խոսում, մի քիչ էդ մասին գրել եմ, բայց Աստված ձեզ ուժ տա, որ հենց վեր կենաք, միանգամից ձեր խոսքը իմպրովիզացիայով սարքեք: Չարենցը մի հոյակապ գործ ունի՝ «Էլեգիա գրված Վենետիկում»: Իսահակյանի դե՛մ: Տեղին է ասել, որ ճշտորե՛ն դեմ: Իսկապես էդպես էլ պիտի լինի: Գուցե էդ իր ընկալման Իսահակյանն է: Բայց՝ չէ, մեղա Աստծո: Շատ լավ գործ է, բա՛յց: Էնտեղ մի բան կա, որ ընդգծել է՝ ուղղակի հին աղայական վերաբերմունքը: Էդպես խորացնելով, ընդգծելով, բարձրացնելով, ասում է՝ ինքը իր Արփաչայն էր ուզում, իր բարե-կամությունն էր ուզում, իր գեղեցկությունն էր ուզում, իսկ
Մյուս դաշտերը – չլուտ ու չոր,
Ու դաշտերում այն – գրաստ ապին:

Գրաստ-ապին եմ ընդգծում:
Հագին նեխած մի, ցեխոտ շապիկ,
Հոգին միշտ համր, հրատոչոր:
Ասում եմ՝ իսկապե՞ս հոգին համր է, թե չէ, հա՞մր է, թե չէ:
Ֆրանսիական հրաշալի-հիանալի կուլտուրայի ներկայացուցիչը,– հենց նա՝ Սենտ-Էքզյուպերին պիտի դառնար 20-րդ դարի մեր էս վերաբերմունքի խորհրդանիշը՝ Սենտ-Էքզյուպերին, երբ արտա-քըսվող հրեաներին բեռնատար-ապրանքատար վագոնները լցրած, ինչին էս երկիրը շատ ծանոթ է, մարդկանցով անասունների վագոնները լցրած տեղափոխում են՝ բոլորն իրար վրա, մեկի գլուխը՝ մյուսի փորին, քնած, երեխաները՝ դես ու դեն, գիշեր, ես ինչ գիտեմ, բոլորին պատկերացրեք,– ահա Սենտ-Էքզյուպերին ասում է՝ վերջին հաշվով կդիմանան, կգնան, կապրեն՝ իմ ցավը նրանց համար չէ, իմ ցավը նրանց մեջ սպանված Մոցարտի համար է: Իմ ցավը մարդու մեջ սպանված Մոցարտի համար է:
Ես ուզում եմ էն ժողովուրդը, էն մարդկանց, որոնց զավակն եմ ես ինձ համարում, էդ մարդկանց միջի Մոցարտին բացահայտել, դուրս բերել էստեղ... Եթե ես երկար ապրեմ և շաա՛տ-շաա՛տ գրեմ և կարողանամ մի քիչ էդ վերաբերմունքը մարդկայնացնել, ուրեմն տեղին է: Իհարկե, ես ոչ ոք եմ: Յուրաքանչյուր ոոպե թեկուզ ամենանշանավոր գրողին,– էստեղ չէ, Ամերիկայում,– կարելի է ական-ջից բռնել ու չքացնել: Սրա մասին չէ խոսքը:
Քաղաքականությունը, պատերազմները ուրիշներն են սկսում: Բայց էն մթնոլորտը, որի մեջ էդ քաղաքականությունը և պատերազմ սկսողները ապրում են, էդ մթնոլորտը վերջին հաշվով գրողներն են ստեղծում: Իսկապես մշակույթի պատասխանատվությունը աշխարհի ճակատագրի մեջ վիթխարի է: Հիմա ասեք, որ քո եղած-չեղած ցեղը ինչով է, չեղած ամբողջ փոքրիկ ցեղի բերած մշակույթը ինչ է, որ կարողանա աշխարհում որևէ բան փոխել: Բոլոր դեպքերում, էս եղած հեկտարի պատասխանատվությունը համարում եմ էստեղի մեր կուլտուրայինը, մեր մշակույթինը, մեր էստեղի մարդկանց, մերը... Տա՛ Աստված, որ սահմանները կարողանանք ճղել, և մեր ձայնը Միության մեջ էլ լսվի, արտասահմանում էլ լսվի, չգիտեմ, էլ որտեղ լսվի... Մեր ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ՝ սա՛ է խնդիրը: Բայց բոլոր դեպքերում, էս երեսուն հազար քառակուսի կիլոմետր տարածությունը, որ քիչ չի և քիչ էլ ժողովուրդ չենք՝ աշխարհի քսանհինգ-քսանվեցերորդ ժողովուրդն ենք, էս մշակույթի մեր սահմաններում,

մեր էս եղած սահմաններում էդ տարածությունը և մթնոլորտը, բարոյականությունը, մարդու նկատմամբ հարգանքի մթնոլորտը եթե կարողանանք մի քիչ մարդկայնացնել, ես ինձ լիովին բավարարված կզգամ...
Ասեք էլ ինչ խոսեմ՝ խոսեմ:
Ասեք՝ ասեմ...
Ավելի ճիշտ կլինի, եթե բանավոր ասեք, ես պատասխանեմ:
Ի՞նչ է գրած:
Լևոն Մկրտչյան – Հայերեն գրեք հարցերը:
Հրանտ Մաթևոսյան – Ինչի՞ չիմանան, որ ռուսերեն գիտեմ:
Ասում է՝ «Դուք բիբլիական մոտիվներ օգտագործո՞ւմ եք Ձեր գրականության մեջ»:
Գիտակցորեն՝ ո՛չ: Բայց երբ իմ տեսածը մեկ էլ տեսնում ես, որ էնտեղին բռնում է... Մի ուրիշ անգամ նույնիսկ էսպիսի խոսք եղավ. թվում էր, թե ես հենց Բիբլիայից էդ բաները հատկապես վերցնում եմ: Բայց էդպես չի: Պարզապես Բիբլիայի մթնոլորտը, Բիբլիայի գրքերի գործողությունների ֆոնը և իմ ապրած կյանքի ֆոնը նույնն են: Դա նույն կյանքն է եղել, որ մեր աչքի առաջ 60-ական թվականներին պարզապես փոխվեց, իսկ մինչև այդ ապրել էինք պարզապես նույն, նո՛ւյն կյանքով: Ակսելի արտահայտությամբ՝ պարզապես տարիները նույն ծառի տարբեր տերևներն էին: Դրա համար ասում եմ, որ Տոլստոյի վիճակը դժվար չէր. ինքը իսկապես ապրեց և ստեղծագործեց մի՝ նո՛ւյն ժամանակում, իսկ ես ծնվեցի մի ժամանակ, տեղափոխվել եմ մի այլ ժամանակ... Բացարձակապես այլ ժամանակ եմ տեղափոխվել... Հեղափոխությունը 17 թվին չեղավ, հեղափոխությունը պատերազմի մեջ եղավ: Էստե՛ղ, է՛ս երկրում հեղափոխությունը «ժիգուլիների» հեղափոխությունն էր և ոչ թե հեղափոխական հեղափոխությունը: Իսկապես ուրիշ աշխարհ է առաջացել, որից ես համարյա թե բան չեմ հասկանում: Եթե դուք հասկանում եք...
– Քանի՞ խմբավորում կա Գրողների միությունում:
– Գրողների միությունում կա երկու խմբավորում, մեկը ես եմ, մնացածը՝ բոլորը...
– Ի՞նչ կարծիքի եք այն կարծիքների մասին, որոնք այսօր եղան ձեր ստեղծագործության վերաբերյալ:
– Եթե ես հիմա ասեմ, և դուք ինձ կոկետության մեջ մեղադրեք, ճիշտ չեք լինի: Չեմ լսում: Իմ մասին որ խոսում են, իսկապես չեմ լսում, ես խլանում եմ, չեմ լսում: Ինչքան որևէ,– էսպես մի սիրուն մեռել պատկերացրեք,– որևէ մեռել իր

մասին կարող է գովեստի խոսք լսել, էնքան էլ՝ ես: Ես խլանում եմ բացարձակապես... Իսկապես չեմ լսում:
Լևոն Մկրտչյան – Բայց, այնուամենայնիվ, հաճելի է, չէ՞:
Հրանտ Մաթևոսյան – Դրա համար էլ մեռելների համար լուսամուտը բացում են, որ լավ քամի փչի: Հավատացեք, որ չեմ կարողանում:
– Քո գործի ռուսերեն թարգմանությունների մասին ի՞նչ կարծիքի ես:
– Ես սա, ինչպես սկզբում, էնպես էլ հիմա, իմ գործը չեմ համարում: Դա վերջին հաշվով ռուս կուլտուրայի հարցն է, թող իրենք մտածեն, թե ինչքանով է իրենց լեզուն պղտորվում կամ պայ-ծառանում, բացվում: Դա ռուս քննադատության խնդիրն է: Եվ այս նույն հարցը մենք մեզ պիտի տանք, երբ էդքան հիմար, զզվելի թարգմանություններ են անում, հայ գրականությունը լցնում անգամ մեծ հեղինակներից արած զզվելի թարգմանություններով: Լուի Արագոնին կամ թե չէ Մարկեսին, կամ թե չէ աֆրիկյան պատահական էսինչ երեսուներկու բանաստեղծի երբ էդ որակով միանգամից թարգմանում ու տպագրում ենք, մեր գլուխն ենք աղտոտում և մեր էջերը, մեր թանկ էջերն ենք աղտոտում:
Մի քիչ, ինձ ներեք, դուր է գալիս, որ իմ թարգմանությունը, էսպես կարելի է ասել, կայանում է, կայացած թարգմանություն է: Թեև փոքրիկ սխալների երբ հանդիպում եմ, դարձյալ վիրավորվում եմ:
Բոլոր դեպքերում ասում եմ, որ դա իմ հարցը չի, դա իրենց հարցն է: Այդքան մի բան: Առաջին շրջանի չտեսությունը հաղթահարվել է մեջս, որ, ահա, ե՛ս, հասել եմ Մոսկվա՛, և գնում եմ Կրե՛մլ, որ սա Ցար-Կոլոկոլն է, որ էս Ցար-Պուշկան է, որ ահա, Ռուսաստանում էսինչը ինձ ճանաչեց... Էդ վերաբերմունքը արդեն հաղթահարվել է, և էդ չտեսությունն էլ արդեն իսկապես հաղթահարվել է: Ուղղակի իմ բախտը բերել է: Իմ թարգմանիչը վատ թարգմանիչ չի... Լավ թարգմանիչ է: Որպես թարգմանություն, որպես լեզու կարծում եմ դա կարելի է կայացած համարել, որովհետև ես նաև գիտեմ, թե ինչ է թարգմանությունը. բոլոր բառերը բերում են էստեղ, բոլոր մտքերը բերում են էստեղ, բայց տեքստը չի շնչում: Անահիտ Բայանդուրի տեքստը շնչում է: Սխալներ են - սխալներ չեն, բայց դա լեզու է, որ, տեսնում ես, միտք ունի, որ կա: Հիմի ուրիշներն ուզում են, որ իրենց էլ նա թարգմանի, որ գուցե թարգմանությունը լինի, ստացվի... Կարծում են, որ մենակ թարգմանիչից է... ես էլ եմ կար-ծում. թող թարգմանի և թող լինի...
– Չե՞ք կարծում, որ Մաթևոսյանը գյուղագիր չէ:
– Հարցը սկզբից, տերմինը սկզբից պիտի ճշտվի, երբ էսպիսի բանակռիվ էր

սարքվում: Զգուշորեն «äåðåâåíùèê»***** բառը ռուսները չակերտների մեջ դրեցին: Մենք էս բառը շատոնց ունեինք՝ արևմտա-հայ արտահայտությամբ ասած: Պատահաբար չհիշեցի նրանց, որովհետև Սրվանձտյանի, Մշո Գեղամի, մյուսների ժամանակներից բառը կա, էս գյուղագիր բառը կա, գյուղը, գավառը ներկայացնողը կա: Եվ կար պոլսեցիական վերաբերմունք առ գյուղագիրները, չլուսավորվածները: Երբեմն նաև կարեկցություն և ցավակցություն կար, որ ահա գավառը կնկարագրե և գավառում խեղճ ու խուլ բաները կնկարագրե... Հարցերը եթե սկզբից ճիշտ դրված լինեին, էսպիսի երանգներ առաջացած չէին լինի, և ձեզ էսօր չէր թվա, թե գյուղագրությունը ետամնաց մի բան է... Բոլոր դեպքերում կարծում եմ, որ հարցի լավ, շատ լավ դնելու դեպքում ամեն ինչ պարզ է. միանգամից էդպես հասարակ ասեմ՝ եթե իմ գրականությունից շատ լավ գրականություն ստացվի, էդ ժամանակ «քաղաքագիր» և «գյուղագիր» ու նման բաներ չպիտի մակաբերվեն: Բոլոր դեպքերում՝ էդ չի: Էությունը գտնելուց հետո էդպիսի հարցեր չեն առաջանում՝ քաղաքի մասին է, գյուղի մասին է... Չնայած հիմա նաև իսկապես գյուղի մասին գրողների վիճակը շատ դժվար է, որովհետև յուրովի սպեկուլյատիվ մի ուրիշ բան էլ է գալիս. էդ ֆոնը, էն միջավայրը, որի մեջ նրանք, էդ մարդիկ ապրում-աշխատում են, նույնպես չքացող-անհետացող է: Դա յուրատեսակ մի մասունք է դառնում՝ էդ չքացող-անհետացող ֆոնը: Էդ մարդիկ, էդ կովը, էդ խաչքարը, էդ ծաղիկը, էդ միջավայրը, որտեղ մարդիկ ապրում են, էդ էլ է չքանում: Պետք է էդ փրկել: Սպեկուլյատիվ հարցը բերում է... Եվ ըստ երևույթին, հարկավոր է դա վերացնել, որովհետև մենք վերջին տեղյակներն ենք էդ կորչող աշխարհի, գյուղական էդ կորչող աշխարհի... Պատահականություն չեմ համարում Վասիլի Բելովի գիրքը, «Лад» գիրքը, ուր զուտ գեղարվեստական միտումներից նա ինքն իրեն զրկել է. գրողը գնացել է զուտ էթնոգրաֆիկ-ազգագրական հետազոտության և ստեղծել էդ գիրքը, ինչը որ մենք ունեինք հանձին Հակոբ Մնձուրու, թեև ոչ էդքան մաքուր վիճակում, բայց ինչը որ Մնձուրին բերել է, դարձյալ մեզ համար շատ է և ձեզ համար պիտի լիներ... Դժբախտաբար, էդքան խելոք չենք, որ էդպիսի գրականության պրոպագանդա լիներ: Դահլիճն էլ էդքան առողջ չի, որ լիարժեք դահլիճ լինի: Ռուս դահլիճին նախանձում եմ... էս դահլիճի մասին չէ խոսքը. ընթերցողական մեթոդ դահլիճի՝ Կարպատներից, Երևանից սկսած մինչև չգիտեմ ուր... Էդ հրաշալի ժողովրդի մասին է խոսքը...

– Есть ли прототипы Ваших героев?

– Это - всегда. Без прототипов не возможно. Ответил?
– Из современных писателей кто Вам близок по духу?******
– Ամենա, ինձ համար, современный-ն, ճիշտն ասած, մնում է Տոլստոյը: Չէ, ֆուրորի համար չեմ ասում: Մի ժամանակ ինձ շատ են դուր եկել էն հեղինակները, ովքեր հարցականով մի բան թողնում են կամ հարցը, պրոբլեմը չլուսաբանված են թողնում: Բայց հիմա արդեն, արդեն երբ ինձ պարտված եմ զգում, նաև էս վիթխարի աշխարհի բարդություններից, ինձ դուր են գալիս էն հեղինակները, ովքեր Աստծու պես կանգնած են կյանքի ակունքում և ասում են՝ լույս եղիցի, և լույս է լինում, ասում են՝ սա չար է, սա բարի է... էս է: Թումանյանն է դուր գալիս արդեն, Տոլստոյն է դուր գալիս: Մեծերն են դուր գալիս: Որ հեղինակներից որ սատանայի ու քայքայիչի,– չնայած՝ մեղա Աստծու, էդպիսի բան չի կարող լինել,– որոնցից սատանայի ու քայքայիչի հոտ եմ առնում, իսկապես զգուշանում եմ, վախենում եմ: Բայց այդպիսի, երկուսն էլ չակերտված ասեմ՝ «քայքայիչի և սատանայի» և «հեղափոխականի» էն լավն առնում են նրանցից, ովքեր որ իսկապես էն աստծու, տոլստոյական աստծու զորությունը չունեն, որ կանգնեն կյանքի ակունքում և ասեն՝ եղիցի լույս, և լույս լինի... Էդ զուտ իրենց ուժի պակասն է բացարձակապես և ոչ թե իրենց ուղղվածությունը: Սատանայական ուղղվածությունը կամ չգիտեմ ինչ... Այդպե՛ս:
Էդ էլ պատասխանեցի...
Լևոն Մկրտչյան – Так, что же лучше, экзистенциализм или ребенок?
– Это из моей повести, Лев Никитич, եթե կարող եք, էկզիստենցիալիզմ ծնեք, это лучше, а если не можете рожать экзистенциализм, тогда лучше рожать ребенка, по моему. Это прекрасно. А вот остаться там, в середине - это страшно.*******
Մի հատ երեխա, մի հատ հոյակապ ծնող կկորցնենք և մի հատ էկզիստենցիալիստ չենք գտնի:
– Вы мой самый любимый, родной писатель... Кто Ваш самый любимый писатель? Что Вы скажете о Булгакове, Шукшине, Айтматове?********
– Իսկապես էսպիսի մի բան կար. աշխարհի գրականությունից ինձ դուր են գալիս իմ հասակակիցները, իմ սերնդի տղաները:
...Ինչից սկսեմ: Վիսոցկուց սկսեմ, որի սերը աղջկաս միջոցով մտավ, և որին տիտանական կերպար եմ համարում:
Իմ սերնդի տղերքից ամենալավագույն սիմվոլը ինձ համար մնում է Շուկշինը: Ոչ

միայն, որ նա կարողացավ էն փախչո՛ղը, հպանցի՛կը, ինչպես ասեմ, էդ խուսափո՛ւկը, որ ազգային ոգի է կոչվում և որ կա, թե չկա, կարողացավ որսալ, կարողացավ ունենալ: Ամենից շատ Շուկշինը կարողացավ անհայտ-անծանոթ նյութին մոտենալ: Ոչ ոք չգիտի, թե ուր ենք գնում: Բայց էդ խաբուսիկին, էդ խուսափուկին, որ մեր անձնավորությունը դեպի անհայտ նպատակն է մղում, ամենից շատ Շուկշինը կարողացավ մոտենալ: Եվ քանի գնում՝ ես տեսնում եմ, որ տիտանական գոյություն կորցրինք հանձին Շուկշինի: Ափսոսում եմ նրա համար, որ ինքը կինոյում աշխատեց, կինոն նրանից շատ ուժեր խլեց, ափսոսում եմ, որ անժամանակ մահացավ... Նրանով, կարելի է ասել, մեր գրականությունը վիթխարի ներդրում ունեցավ աշխարհի գրականության մեջ:
Պատասխանեցի՞ պատվով:
Դահլիճից – Այթմատովի մասին խոսեք:
Հրանտ Մաթևոսյան – Նուրբ բաների մասին խոսեցինք: Շուկշինյան, ինչպես ասեմ՝ իմպրեսիոնիզմի մասին ասինք, էդ անորսալին որսալու, էդ հպանցիկի, փախչողը որսալու մասին... Դրանից հետո խոսել Այթմատովի մասին՝ Այթմատովը կոպիտ է: Ահա, հենց այդ «անորսալին որսալու» համեմատությամբ մի քիչ ավելի գրականական է: Էսպես, ֆորմա է սարքում, գիտի երկու կաթիլ արցունք պոկել, գիտի սկիզբ դնել, գիտի կուլմինացիա դնել, մեկնումեկին անպայման սպանում է և հրաշալիորեն կարողանում է իր սարքած ֆորման լցնել: Սկզբում ես ներքուստ օպոզիցիայի մեջ էի առհասարակ էդ բանի հետ, բայց հիմա գրականության դեղատոմսը ես չեմ տալու, ինքը իր դեղատոմսը տվել է և ինքը ստեղծում է իր գրականությունը, որ աշխարհի ամենամեծ դահլիճը ունի: Բայց առաջին շարք, առաջին շարքի գրականություն դա համարել, ահա, նույն Բուլգակովի՛ համեմատությամբ, Շուկշինի՛ համեմատությամբ, Ֆոլքների՛, Անդրեյ Բիտովի՛ համեմատությամբ չի կարելի, էն չի՛: Պիտի նրանց թիկունքից երևա, ինչպես պալիտբյուրոյում երկրորդներ կան, չէ՞...
Ես ուզում էի նրանից Վիլյամ Սարոյանին բամբասել, ուզում էի Չինգիզ Այթմատովից բամբասել: Ասում էի՝ նրա գործը շատ է կատարյալ, նրա գործը շատ է կլոր, շատ է հասկանալի, շատ է փակ, շատ է ավարտուն, չգիտեմ, էնպես մի բան էի որոնում, որ ինքը հասկանա, ասացի՝ նրա գործը ձվի նման է, ձու է: Ինքը ասավ՝ ես քեզ բան մը պիտի ըսեմ՝ ձուն աղվոր է... Իսկապես աղվոր է: Վերջին գործը՝ «И дольше века длится день*********, բոլոր դեպքերում, ֆանտաստիկայի շարքն է: Դրա հախից է եկել, էն մյուսն էլ է կարողացել անել,

կենցաղային տարրը հրաշալի է նկարագրել և էնտեղ թիկունքում ժողովրդական մարդու կերպար ունի՝ ծեր ղազախի կերպարը, և բոլոր դեպքերում կարողացել է իր պրոբլեմները, զուտ միջինասիական իր պրոբլեմները հրապարակ հանել և պատասխանի առաջ կանգնեցնել ուրիշներին: Իմ տպավորությունը. երբ կարդացի, արդեն բավական է, ասի, արդեն հերիք է, կոնֆրոնտացիան աշխարհում արդեն չի լինի: Նրանց ղեկավարները կկարդան, մեր ղեկավարները կկարդան, կհավաքվեն էն բանի համար, որ չի կարելի, որ ամեն մեկը իր էգոիստական շահի համար խաղա աշխարհի բախտի հետ: Ավելի ճիշտ, էնտեղ հերոսը վախն է, իրարից վախենում են, մերոնք՝ նրանցից, նրանք՝ մերոնցից, և արանքում գուցե երկիր պատռեն, և ամեն մեկը իր բաժինը վերցնի, մի կողմի վրա տանի... Կարծում էի, թե Չինգիզի գրքերով կարելի է էդպիսի ռոմանտիկա ունենալ, էդպիսի հավատ ունեն: Կարծում էի, թե կկարդան, և նրա գործը էս միջազգային մթնոլորտի բարելավման վրա ազդեցություն կունենա... Բոլոր դեպքերում երբեք չպիտի մոռանալ, որ ով ուզում է լինի, որևէ ամենաապիկարը, ամենա, ես ինչ գիտեմ՝ փոքր ժողովրդի գրողը, երկու ընթերցող ունի, թե երկու միլիոն, բոլոր դեպքերում նա չպիտի մոռանա, և բոլորիս նպատակը պիտի լինի, որ կարողանանք ազդել մեր և նրանց ղեկավարների վրա, որ երկիրը պատառ-պատառ չանեն, ասեն՝ էնտեղ էլ են մարդիկ, նրանք էլ ասեն՝ էստեղ էլ են մարդիկ... Այդպես:

Լևոն Մկրտչյան – Մի հարց կա՝ «Ձեր կյանքում եղե՞լ է որևէ ցնցող դեպք»:

Հրանտ Մաթևոսյան – Մի հատ էդպիսի դեպք եղել է, բայց ճիշտն ասած՝ դա չի կարելի դեպք համարել, որովհետև արդեն քսանհինգ տարի է էդ դեպքը շարունակվում է. էդ իմ ամուսնանալն է:

– Ի՞նչ կարծիք ունեք այսօրվա հայկական կինոյի մասին:

– Շատ վատ կարծիք ունեմ: Շատ, շատ վատ կարծիք ունեմ, շատ ցավալի կարծիք ունեմ: Շատ վատ կարծիք ունեմ: Կարծում եմ՝ դա մեր ազգային ամբողջության, մեր ազգային ամբողջականության ամենահզոր զենք էր լինելու մեր ձեռքին, բայց այդպիսի զենք այսօր չկա... Որպես դանակ էլ չկա: Որպես խոհանոցի դանակ էլ չկա: Ցավալի է, որ այդ այդպես է: Ուրիշ զենք չունենք: Դիպլոմատիա չունենք: Ի՞նչ չունենք: Միջազգային իրավունքներ չունենք: Թուրքերը Բաթումի դաշնագրով մի դիվիզիայի իրավունք էին տվել. էդ դիվիզիան էլ չունենք: Կինո ունենք և թարգմանվելու և թարգմանելու իրավունք: Եվ ահա այդ հրաշալի զենքը ձեռքից կորցնել... Շատ ցավալի կորուստ է: Ձեք

հավատում, նայեք վրացական կինոն: Մեր ամբողջ երկիրը Վրաստանի մասին ինչ կարծիքի է և մեր մասին ինչ կարծիքի է: Կինոն նրանց ձեռքին զենք է, մեր ձեռքին զենք չի: Այդ եմ ասում:

– Ի՞նչ կարծիքի եք Ձեր ստեղծագործությունների հիման վրա նկարահանված «Աշնան արև», «Տերը» կինոնկարների մասին:

– Եթե դուք արտահայտվեիք, ավելի ճիշտ կլիներ: Իմ վերաբերմունքը մի քիչ սուբյեկտիվ է, որովհետև ես կարծում էի, թե էդպիսի բաներով ժողովրդի ձեռքը զենք եմ տալու, ու էդ զենքը չի կայացել... Ես էդ տեսակետից եմ նայում: Հիմա եթե ասեք, որ բանի պետք չեն, գուցե իսկապես վերաբերմունքս շատ ժխտական, անձնականորեն շատ վատ լինի: Կարող է իրենցից որևէ արժեք ներկայացնում են, ով գիտի, ինչ ասեմ, ինձ դուր չեն գալիս:

Ինձ դուր է գալիս Ֆեդերիկո Ֆելինի, Անդրեյ Տարկովսկի, Տարկովսկու առաջին շրջանն է դուր գալիս՝ «Ռուբլյովը»: Մեր Ռոմա Բալայանն է դուր գալիս, որ հրաշալի երեք ֆիլմ է արել ուկրաինական ստուդիայում:

Մերոնց արածներից դուր է գալիս Հենրիկ Մալյանի մի երկու գործը: Իմը՝ չէ: Ես իմի նկատմամբ շատ ավելի խիստ եմ, քան ուրիշները:

Այդպես:

– Ինչպիսին է Ձեր կարծիքը «Ձեզոք գոտու» բեմադրության մասին:

– Եթե իմ մասին դո՛ւք խոսեք, ես իսկապես շատ գոհ եմ լինելու: Եվ վկաներ ունեմ էստեղ, որոնք գիտեն, որ ես «Ձեզոք գոտու» բեմադրությունը չեմ նայել հեռուստատեսությամբ: Չեմ նայել: Եվ վա-ղուց սա կա: Հիվանդություն է դարձել մեջս առհասարակ: «Կայարանը» բեմադրեցին հեռուստացույցով, կարողացա չնայել:

Երդվում եմ, Հենրիկ Մալյանը վկա է, «Մենք ենք, մեր սարերը» տեսել եմ հինգ տարի հետո: Պատմել են, ցիտատներ են ասել, ասել եմ՝ կարող է՝ լավ է, բայց հինգ տարի հետո եմ կարողացել հաշտվել այդ իրողության հետ: Ես դժվար եմ հաշտվում:

Հետո՝ էդ տղան արդեն մահացել է, չի կարելի նրա մասին բան խոսել:

– «Տաշքենդը» ձեր լեզվամտածողության մեջ անցում համարո՞ւմ եք: Գրքային տարբերակը հարազատ կլինի՞ ամսագրային տարբերակին:

– «Տաշքենդը» մի քիչ, մի փոքրիկ դժբախտություն ունեցավ, ինքը պիտի տպվեր, հրապարակ հանվեր իր շրջանակով, իր կողքի պատմություններով: Եվ էն ժամանակ «Տաշքենդի» շուրջ թյուրի-մացություններ չէին լինի: Չնայած, կարծում

եմ, էնպես էլ... Էդ միակ գործն է, որ եթե բոլորդ կանգնեք և հայհոյեք, ես պիտի պաշտպանեմ: Էդ գործը ես սիրում եմ իսկապես: Լավ գործ է: Էնտեղ շատ ճշմարտություններ և շատ ողբերգություններ կան, նույն ողբերգության տարբերակներ, իրար ոչնչացնող ողբերգություններ: Էկլեկտիկա չի, այսինքն՝ ճիշտ գործ է: Մի քիչ ձանձրույթ կա վերջում: Ես էլ էի խուսափում, չգիտեի՝ ինչպես փակեմ: Ձեռ չտամ, չէ՞:
Լևոն Մկրտչյան – Սկզբին էլ ձեռ չտաս:
Հրանտ Մաթևոսյան – Էս՝ ասի, էս՝ ասի, էս էլ...
Լևոն Մկրտչյան – Էս է, թա՛րմ հարցեր են, թա՛րմ:
Հրանտ Մաթևոսյան – Պարույր Սևակի մասին է էս հարցը. «Դուք միութենական մամուլում անդրադարձել եք այս հարցին, բայց եթե կարելի է՝ նորից: Ի՞նչ կարծիքի եք Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի և նրա պոեզիայի մասին ընդհանրապես»:
Նախ՝ կորստի մասին: Մենք կորցրինք հանրապետության եզակի մարդկանցից մեկին: Եթե լիներ, ես գնալու էի իր մոտ իմ նեղ պահին: Նրա բերած մտածողությունը, նրա բերած ազատությունը, քայլի շիտակությունը, ուժը... Էդ կերպարի պակասը՝ անվախ, կտրիճ, անվերջ իրենից դժգոհ և մեզանից դժգոհ, էդ բունտարի կերպարի պակասը մենք զգում ենք... Ափսոս է Էդպիսի իր կորուստը: Նույնը և իր պոեզիայի մասին: Կարծում եմ, որ բոլոր կարողությունները կորցրած մի ժողովրդի զավակն էր ինքը, որը որ գիտեր, որ միայն գրականությամբ կարելի է նոր նվաճումներ և նոր ետբերումներ ունենալ: Եվ իսկապես էս հին ու հրաշալի լեզուն, էս մշակույթը թափ տալ փորձեց, որպեսզի մշակույթի հետ թափ տրվի նաև ժողովրդի մտածողությունը, որ էս ժողովուրդն էսքան անճար ու անատամ չլինի աշխարհի առաջ, ինչպես որ հիմա է:
Իմ կարծիքը ես ասի, դուք լսեցի՞ք: Միութենական մամուլում ես ի՞նչ եմ ասել նրա մասին: Ասել եմ՝ կարելի է եղեռնի մասին գրել, ես ասել եմ, որ ես անձամբ ի վիճակի չեմ, որովհետև ամեն անգամ էդ հարցին անդրադառնալիս ֆիզիկապես հիվանդանում եմ: Ուրի՞շ: Կարող է ասած լինեմ նաև, որ Թումանյանը չկարողացավ. եղեռնի ականատեսը, որդուն կորցրած, եղբայրներին կորցրած, աղջիկներին եղեռնի ճակատում տիֆի մեջ տիֆի դեմ պայքարողների մեջ դրած՝ Թումանյանը չկարողացավ: Գրեց մի հատ «Հոգեհանգիստ», «Մուսադաղը» ես հաջողություն չեմ համարում:

Իսկ էդ ժամանակ ինքը ասավ՝ իսկ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատո՞ւնը»: Ես էլ ասի՝ Պարույր Սևակի ստեղծագործության մեջ Պարույր Սևակի հաջողությունը «Անլռելի զանգակատունը» չի, ուրիշները-մյուսներն են հաջողությունները: Բայց ընդհանուր ազգային մի հատ սիմվոլ կա, որ ասում ենք՝ Մասիս, բոլորս ոռնում ու լաց ենք լինում, երբ ասում ենք՝ եղեռն, ասում ենք 15 թվին մեզ տանջել են, սպանել են, մեզ մորթել են, ոռնում ու լաց ենք լինում: Դա զուտ մեր սիմվոլն է, ուրիշ որևէ մեկի համար դա հասկանալի չի: Պիտի էդ սիմվոլը դու նորից ստեղծես: Ֆրանսիացու առաջ ենք դնելու էս գրականությունը, ի՞նչ է լինելու:
«Վարդանանքը» մեր ազգային հպարտությունն է, իսկ ես, էն ժամանակ, պատանի լինելով քրտնեցի, երբ տեսա ֆրանսիացիները երկու հատորից մի հատոր են սարքել, և չգիտեմ՝ քանի օրինակ է ծախվել և ինչպիսի արձագանք է ունեցել: Զուտ մեր սիմվոլներով չի կարելի: Ես՝ հեղինակս, պարտավոր եմ ահա դարձյալ իմ այբուբենը ստեղծել, ցավի այբուբենը, հերոսության այբուբենը, և ոչ թե ասեմ՝ Անդրանիկ, և արդեն պատրաստի հերոս է, ոչ թե ասեմ՝ «թուրք», և իբր թե արդեն դա չարության բառն է: Աշխարհը դրան պատրաստ չի: Թուրքը էնքա՜ն բարեկամ ունի աշխարհում, լի՛քը բարեկամ ունի: Դիպլոմատներ ունեն, ժողովրդի փողերը Եվրոպայում ծախսում են, կանանց հետ քեֆեր են սարքում: Եվրոպայում թուրքը էնքան բարեկամ ունի, իսկ դու ասում ես՝ «թուրք-չարագործ»: Չէ, թուրքը չարագործ չի: Ամենևին: Դո՛ւ ես նրա առաջ ողորմելի: Թուրքի չարագործությունը նույնպես պիտի ապացուցվի, պիտի սիմվոլացվի: «Թուրք-չարագործը» պիտի սարքես, Անդրանիկ զորավարին դարձյալ, նորից պիտի վերստեղծես, այսինքն՝ ինչպես նորմալ գրա-կանության մեջ, քո այբուբենը, քո սիմվոլիկան նորից պիտի վերստեղծես: Եվ ահա դրանով պիտի անես քո սքանչելի անցուդարձը, առևտուրը քո գրականության մեջ: Եվ՝ ստեղծվա՞ծ են էդ կերպարները: Մի կերպար իսկապես ստեղծված է, որին իսկապես պատրաստ ենք՝ ժողովրդական մոտիվի օգտագործումը: Մնացած բոլոր դեպքերում զեղչ կա: Եթե էս հարցը արծարծվել է էստեղ՝ միանգամից ասեմ. եթե եղեռնի հարցը դրել ես քննարկելու, պիտի խորքից և էությամբ, «Ակսակով» ընկերության գործունեությունից սկսած, համապավոնական-պանսլավոնիզմի պրոբլեմները քննելով, և դրա հետ միասին բարձրացնելով պանթուրքիզմի, պանսլավոնիզմի ծնունդ պանթուրքիզմի պրոբլեմը, բարձրացնելով, քննելով միջազգային դիվանագիտության

պատմությունները պիտի բերես, մեյդան հանես... Որը որ ո՛չ ինքն է արել, ո՛չ ես եմ արել, ո՛չ էլ որևէ հայ պատմագիր և պատմաբան, ո՛չ էլ պատմաբանների մի վիթխարի խումբ: Ո՛չ ոք էլ չի արել: Էդ պրոբլեմը չի լուծված:
...Ահա Տոլստոյի մասին քիչ առաջ ասի. լույսի ակունքում կանգնած է. տիտանական ուժի էն ստեղծագործողի կարիքն եմ զգում: Ակունքում կանգնի և իսկապես լուսավորի՝ չարը՝ սևով, բարին՝ լուսավոր գույների մեջ, ահա էդ եղեռնը ստեղծագործողի, ինձ՝ Հրանտ Մաթևոսյանի համար: Ես տեսնում եմ, որ նա տերն է իսկապես: Ես չեմ կարողանում, որ ահա էդ բարձրության վրա կանգնեմ և ահա էդպես լուսավորեմ, որպեսզի ձեր հոգին ոչ թե աղտոտվի,– որովհետև աղտոտվում է ամեն անգամ, երբ թերի հարցականների բան է մնում և ոչ թե որևէ ավարտված առարկայի և դեպքերի ու հարաբերությունների պատկեր է տեսնվում,– որպեսզի ձեր հոգին ոչ թե աղտոտվի, այլ պայծառացած դուրս գա: Թումանյանի «Անուշում» և Թումանյանի ողջ ստեղծագործության մեջ մի հայ բախտավորված կերպար չկա, բոլորը հալածականներ են, բոլորը զոհեր են: Բայց դու պայծառացած ես դուրս գալիս, որովհետև գործը ամբողջապես արված է, որովհետև արվեստի հրճվանք ես բերում, Թումանյանին ես դուրս բերում... Ահա, որպես Թումանյան կանգնենք եղեռնի պրոբլեմի ետևը: Ես չեմ զորում: Կարծում եմ՝ Պարույրը նույնպես չի զորում: Էս՝ իմ պատասխանը:
Լևոն Մկրտչյան – Հրանտ, էստեղ կա մի շատ բարդ հարց:
Հրանտ Մաթևոսյան – Դարձյալ էն վիճակում եմ, որ էի քիչ առաջ. «Կարպով–Կասպարով մրցամարտի ելքի ձեր կարծիքը»:
Դարձյալ հարցականներով եմ: Չգիտեմ: Խոսակցություններ ականջովս ընկան, որ էնտեղ գրոսմայստերների մի ամբողջ դահլիճ է նստում: Մեկի անունը «ձի» է: Ասենք թե նա, եթե ասենք էսինչ քայլերը պիտի անի, էս «ձին» դուրս է գալիս: Նրանց պաշտպանյալը ձիու քայլն է անում:
Էսպես բաներ որ ընկան մեջս, ես ուզում եմ Կասպարովը տանի, ճիշտն ասած: Էս է: Նախ, որովհետև նրան, որպես հերոսի, չեմպիոնին հա դիմում են, էդ ձենը հաճելի կլինի լսել: Հետո, նաև, ճիշտն ասած, վերաբերմունքս այլ է եղել, կտրականապես այլ է եղել հայ կուլտուրայից կտրվածների, լեզուն կորցրածների հանդեպ: Բոլորովին այլ է եղել: Հիմա էլ է այլ, իհարկե: Ամբողջական մի ցեղի հետ էինք գործ ունենալու, այդ ժամանակ գեղեցիկ կլիներ: Բայց Սարոյանի փաստը ինձ բոլորովին փոխեց: Սարոյանի հոբելյանական երեկոյին ես ելույթ էի ունենում, էլի դարձյալ կացուկամ էի՝ և՛ էստեղ էի, և՛ էնտեղ էի: Ես ասել եմ՝

բարով եկար դու հայ մշակույթ, բայց ինքը երկիր է, իսկապես հայ գրող է, չէ՞: Հետո: Մյուսը կրտսեր Մայքլ Առլենի «Դեպի Արարատ» ճամփորդությունն է: Հզոր մի գիրք է գրել. ուրացած հոր ուրացած զավակը ասենք, հա՞: Գույումճյան ենք ունեցել, ի՞նչ Գյումճյան: Գրել է «Կանաչ գլխարկը» վեպը: Պոլսեցի է, փախած... Չմեղադրենք էս փախչողներին. հեշտ չի անվերջ հայի կաշվի մեջ լինել, Ավետիս Ալեքսանյանի վիճակում լինել: Նա էլ էդպես է գնացել, գնացել է իր մարդկային բախտը որոնելու: Ահա, էս կրտսեր Մայքլ Առլենի «Դեպի Արարատ» ճամփորդության գիրքը, որ ես կարդացի, մի հատված էլ դուք եք կարդացել «Սովետական Հայաստան» ամսագրում, Վիլյամ Սարոյանի փաստը, Գառզուի փաստը: Ուրի՞շ: Ուրիշ՝ Մարիետա Շահինյանի էն ցիկլը կա. հետո՝ ասում էր՝ էս է կմեռնեմ, դուք կտեսնեք ինչ հայ եք կորցրել, որ ինձ հայ չեք համարում:

Սա նույնպես ազգային կեցության վիճակ է: Եվ տա Աստված, որ հանրապետությունը և մենք էնքան պինդ լինենք, որ կարողանանք էդ վիճակները վերցնել մեզ համար: Դա նույնպես մեզ համար է: Կարողանանք դժբախտությունը մեզ համար ուժ դարձնել:

Հիմի էս յոթանասունհինգ տոկոսանոց,– ինչի՞ յոթանասունհինգ տոկոսանոց՝ յոթանասունհինգը քիչ չի,– էս յոթանասունհինգ տոկոսանոց հայ Կասպարովը լավ կլիներ, որ ինքը հաղթեր: Շատ եմ ուզում, որ ինքը հաղթի, և շատ վատ եմ զգալու, եթե ինքը պարտվի...

– Մենք Ձեզ շատ ենք սիրում, իսկ Դո՞ւք...

– Ուկրաինացի մի շատ լավ գրող կար: Ճակատագրական տարի կա արդեն գրողների համար: Կամյուից հետո մի տեսակ մոդա դարձավ՝ քառասունյոթում մեռնում են: Մեր Մուշեղը, Պարույրը, Մինասը, Շուկշինը... Էս Տյուտյուննիկը. կարծում եմ գրաֆոմանություն չարավ. իր մրցանակ ստանալու օրը գնացել կախվել էր: Երբեմն ես էլ եմ ուզում կախվել, բայց ձեր սերը ինձ պահում է:

– Ձեր ստեղծագործական դավանանքը:

– Ձեր ստեղծագործական դավանանքը: Ես մի քիչ չեմ հասկանում: Չգիտեմ սրան ինչ եմ պատասխանելու:

Հլա, լավ, Լևոն, դու սկսիր, ես շարունակեմ:

Լևոն Մկրտչյան – Հենց դու ես, էլի, քո դավանանքը:

Հրանտ Մաթևոսյան – Չէ: Դարձյալ Սարոյանն է էս հարցի մեջ իմ պատասխանը: Ճիշտն ասած, Զորի Բալայանը նրա ասածից կորզել էր...

ապրի՛, արժի՛...
Ասել էր՝ մենք էս երեխաների աչքերից պիտի վախը հանենք: Հրաշալի է: Ես էլ կարծում եմ, որ մարդկանց արանքից էս թշնամանքը և թյուրիմացությունը պիտի կարողանանք հանել: Եթե կա-ողանամ թուրքերի վերաբերմունքը մեր նկատմամբ, թուրքերի կասկածը մեր նկատմամբ ես մի քիչ պակասեցնել, պիտի շատ բավարարված լինեմ:
Եթե կարողանամ նրանց ներարկել մի քիչ արդարության զգացում, որ չի կարելի օկուպանտ լինել և հանգիստ զգալ էս աշխարհում, ես պիտի ինձ անչափ երջանիկ զգամ: Եվ արդարության որևէ զգացում՝ նրանց, ովքեր օկուպանտ լինելուց հաճույք են զգում, և մի քիչ հարգանք առաջացնել մեր նկատմամբ, նաև իրենց զինվորի նկատմամբ, ես պիտի անչափ ինձ լավ զգամ... Այդպես: Պատասխանեցի՛:
– Ասում են՝ Երևանը վատ հանրակացարան է: Ո՞վ է երևանցի:
– Էս անգամ, որ գնացել էինք Մոսկվա, էնտեղ մի հատ շատ սիրուն, մաքուր տեղ կար: Էդ Կրեմլը, չէ՞, որ նայում եք, սիրուն, կանաչ, մաքուր, լուռ... Եթե ուզում եք էս աշխարհի աղմուկից փախչել, գնացեք Կրեմլ: Ներս եք մտնում, լուռ, մաքուր... Մեզ էլ տարան, հակառակի պես, բնակեցրին: Էդ չորս օրվա կոմունիզմից հետո եկա տեսա՝ էս ի՛նչ աղմուկ է, էս ի՛նչ փոշի է, էս ինչ բան է... Բոլորը թշնամանքով են վերաբերվում, բոլորը կարծում են՝ եկել եմ էստեղ, հետո գնալու եմ իրենց գեղը: Չկա, ախր, չկա, էդ գեղը չկա, որ քաղաքը մաքրվի: Տպավորությունը առայժմ տհաճ է, տգեղ է: Ըստ երևույթին, միակ միջոցն էն է, որ ավտո են առնում, նստում և քշում դես-դեն... Ես էլ դա չեմ կարող...
– Հայ գրականությունը այսօր ի՞նչ վիճակում է:
– Կհամբերեք, կդիմանաք մինչև Հայաստանի գրողների հաջորդ համագումարը, մինչև որ Վարդգես Պետրոսյանի զեկուցումը կլսեք և կտեսնեք, թե հայ գրականությունը այսօր ինչ վիճակում է: Ես հիմա ինչ ասեմ: Ինձ չպիտի հավատաք, իմ վերաբերմունքը չի կարող ճիշտ վերաբերմունք լինել: Թղթի վրա աշխատելը, այսինքն՝ էս գրողի վիճակը... ներողություն եմ խնդրում դրա համար, բայց, բոլոր դեպքերում, իմ քիմքը նրբացրել է, ինձ շատ քիչ բան է բավարարում: Նույնիսկ Տոլստոյի մեկ քառորդն է ինձ դուր գալիս: «Смерть Ивана Ильича»-ն դուր է գալիս, «Отец Сергий»-ն՝ ես նկատում եմ, տեսնում եմ,– զուցե շատերը ձեզանից չեն տեսնում, բայց ես տեսնում եմ,– սևագրություն է, ինքը չի մաքրագրել, չի արել: Իմ նրբացած վիճակով մի դատեք գրականության մասին:

Ես ունեմ իմ սիրելի գրողը, որից տարեկան երկու բանաստեղծություն եմ սպասում, և փառք Աստծո, ինքը լիուլի տալիս է: Էդ Համո Սահյանն է: Ոմանց ձանձրալի է թվում, ոմանք ասում են՝ դեռ կա, բայց մեկ է, ամեն տարի երեք-չորս բանաստեղծություն գրում է: Ունեմ Ռազմիկ Դավոյանը, որ միշտ մի տասը տնից երեք տունը ավելորդ է գրում: Հետո ասում ես՝ որ երեք տուն ավել էր, հետդ խոռվում է: Մյուս անգամ էլ է գրում: Բոլոր դեպքերում ինքը կա:
Վահագն Դավթյանը, որ կուլտուրայով, աշխատելով, աշխատելով, մարդու բնավորությունների իր սահմանները հոկելով եկավ հասավ էմոցիոնալություն զարմանալիորեն: Սքանչելի պոեզիա է ստեղծում:
Ո՞ւմ ասեմ:
Հովհաննես Գրիգորյանը մի քիչ դուր է գալիս: Երևի էս էստեղ ասելու բան էլ չէր, հա՞, դրա համար: Հովհաննես Գրիգորյանի մեջ տաղանդ եմ տեսնում: Բայց վերջերս մի գարշելի հոդված էր գրել, չեմ իմանում էդ, էդ ինչ պատմություն էր: Էդ տեսակ մի փաստը բավական է, որ ետևը կանգնած անհատականությանը չհավատաս...
Ուրիշ ո՞ւմ մասին ասեմ: Ասե՛ք:
Տաղանդավոր մարդ է Հովհաննես Մելքոնյանը, և նրանից պիտի միշտ լավ բան սպասել: Ասենք, կարող է չորսից երեքը շատ լավ լինի:
Զորայր Խալափյանից հույսը դեռ կտրած չպիտի համարել, չնայած վերջերս մեքենայական արտադրության է անցել: Բայց նա «Որտեղ էիր, մարդ աստծո» վեպի և «Մեռնող-հառնողի» հեղինակն է. նա չպիտի անակնկալներ ունենա: Մուշեղը իզուր մեռավ: Սխալ արավ, որ մեռավ: Դա դավաճանություն էր:
Ուրիշ ում ասեմ: Ասեք՝ ասեմ:
Էսքանը հերիք է:
Վազգեն Գաբրիելյան – Աղասին...
Հրանտ Մաթևոսյան – Վազգենի ձայնը լսեցի ոնց որ՝ Գաբրիելյան: Էդ ձեր պատմությունն է: Դուք գիտեք:
Ասում է՝ երբ հանդիսավոր երեկույթ կազմակերպելիս էինք լինում և պատվավոր հյուրերի ցուցակը կազմում էինք, միշտ վերջին պահին տեսնում էինք, որ Գաբրիել Սունդուկյանի անունը մոռացել ենք, և բերում, առաջն էինք դնում: Բայց ցուցակը պատրաստելիս միշտ մոռանում էինք:
Էս Աղասին էդ Սունդուկյանի վիճակին է: Մի՛շտ: Թերևս ամենից լավ ինքն է գրում, բայց միշտ իրեն մոռանում ենք:

Ինքն էլ իրեն կողքի է պահում:
Փառահեղ ստիլիզատոր է, փառահեղ: Լավ ոճ է անում: «Թիֆլիս» սքանչելի պատմվածք ունի, երկու հատ էլ խղճի մասին սքանչելի գործեր ունի, մի երկու հատ էլ շատ վատն ունի: Մի խոսքով ինքն էլ կա: Մեր վիճակը էնքան էլ ողբերգական չի, ինչքան որ կարող է թվալ:
Բայց գուցե մեր դժգոհության հիմքը էն է, որ դարձյալ մեզանից ավելի շատ բան է պահանջվում, քան նորմալ ազգային կյանքով ապրող մի ուրիշ ազգի գրականությունն էր լինելու: Մեզանից շատ է պահանջվում, արդեն մեռած Շիրազից է պահանջվում, արդեն անցած Պարույրից է պահանջվում...
Մեր վիճակի դժվարությունն է...
Ժողովուրդն այլևս ոչինչ չունի, մենակ իր գրողներից է սպասում:
Կարճ ասեք, էլի... Ինչ էլ սիրուն ձեռագիր է: Աղջիկ է: Հիմի ասեմ, աղջիկ ես, երեսուներեք տարեկան, չամուսնացած...
Էս ինչ է, կարճ ասեք:
Լևոն Մկրտչյան – Հա, տասնութ տարեկան է, սխալ ասացիր, հա:
Ասում է՝ «Ինձ թվում է, Ձեր ստեղծագործություններում շատ ընդհանուր բան կա՝ ամերիկյան գրողների հոգեբանական վիճակը բացահայտելու» և այլն, և այլն:
Ես ճի՞շտ եմ հասկանում Ձեզ, թե՝ չէ:
Հրանտ Մաթևոսյան – Ինչպես որ կարող է թվալ, ես էդ ընթերցողը չեմ, գրամոլը չեմ: Աչքս սրվել է և միանգամից տեսնում եմ էն, ինչ ինձ պետք է: Ֆելինիին հարցրել էին՝ հիմա ինչ կարծիքի ես Ջոյսի մասին: Արևմտյան ժամանակակից գրականության նախակարապետը, սկիզբը, հիմնադիրը... Ասում է՝ շատ հակամանկավարժական-հակադաստիարակչական կլինի, եթե ասեմ՝ Ջոյս չեմ կարդացել, որովհետև ուրիշները, որ Ֆելինի սիրում են, պիտի ասեն՝ կարիք չկա Ջոյս կարդալու: Խորհուրդ եմ տալիս՝ ինքը ինչ որ կանի, ինտերվյու կլինի, իր մասին կլինի, կարդացեք: Ուղղակի մեծ գրողների թվում նրա անունը պիտի տալ, որպես մեծագույն գրողի, որպես 20-րդ դարի մեծագույն գրողի: Դա մի մարդ է, որ գրիչի փոխարեն կամերայով է աշխատում և 20-րդ դարի մեծագույն գրողն է՝ Ֆոլքների, Շոլոխովի, Սարոյանի, ամենամեծ գրողների մեջ:
Անտոնիոնին եկել էր էստեղ: Մենք մեր գիտակության, գավառացու մեր գրականության բարձրությունից պիտի ասեինք իտալական էսօրվա կինոյի մեր իմացած նրբությունների մասին, վերջը մեկի մտքով անցավ Ֆելինիի մասին հարցնել Անտոնիոնիին: Տեսնեիք արհեստակցի սրա հպարտությունը

արհեստակցի համար, նույն գործի մարդու համար, իտալացի կինոհանդիսականի, իտալացու հպարտությունը իտալական տիտանի համար... Ժպտաց լայն, ասաց՝ որ նա կա, ինչո՞ւ եք ուրիշի մասին խոսում:
Ես էդ գիտակը չեմ, ճիշտ ասած: Եվ եթե ասեմ, որ մինչև հիմա ոչ մի վեպ մինչև վերջ չեմ կարդացել, հավատացեք, որ էդպես էլ կա: Վերջից եմ կարդում, մեջտեղից, էսպես, մի կտոր... Բայց ինձ բախտավոր եմ համարում էն իմաստով, որ ամենանուրբ ընկալման տարիքում Սարոյանից չորս պատմվածք ընկավ ձեռս: Դրանցից մեկը կոչվում էր «Սև թաթարներ», մյուսը կոչվում էր «70 հազար ասորի», «Հայը և հայը» և էլի մի երկու պատմվածք: Եվ հետո նաև էս «Երևան» թերթում, թե որտեղ, մի երկու հրապարակումներ: Եվ տեսա, որ դա հենց էն է, որ պիտի իմ հերը լիներ, իմ սկիզբը լիներ, դա հենց էն է, որ պիտի գար, ինձ օգնություն ցույց տար: Որովհետև Բակունցի յուրացումը իսկապես գնացել էր մեջս արդեն, ռեաբիլիտացված Բակունցի, Մահարու էդ սքանչելի, շողշողուն գրիչը... Բայց էդ ազդեցություն չէր, չէ, չեմ կարող ասել: Դրանք էդ լույսը բացում էին: Հետո, քսանհինգ տարի հետո տեսա, որ Բակունցը ինձ չի լքել, Բակունցը մեջս է: Մահարուց բան չեմ հիշում: Հիշում եմ, որ մի հատ հրաշալի, տանջված անձնավորություն կար, որ գրում էր, և դա հետաքրքիր էր, յուրաքանչյուր էջը՝ հետաքրքիր: Էդ ասեմ, բայց Սարոյանն էլ ամերիկյան գրականության դուռը բացեց: Ֆոլքներ եմ կարդացել, էն էլ վերջերս, բայց պատրաստված էի դրան: Հեմինգուեյ կար, Սարոյան կար, մի քիչ Քոլդուել կար... Վերջը կարիք չկար, որ էդ ամենը ես յուրացնեի, ամբողջ ծովի ջուրը խմեի, որպեսզի ասեի, թե ծովի ամեն կաթիլը ինչ համի է: Չգիտեմ ով էր ինձ պատրաստել էդ գրականությունը ընկալելու, բայց ես արդեն պատրաստ էի էդ գրականությունն ընկալելու: Շնորհակալ եմ ինձ տրված էդ հրաշալի հնարավորության համար: Շնորհակալ եմ նաև ռուս մեծ գրականության համար և անչափ շնորհակալ եմ էն իմ հրաշալի պատանեկան տարիքում կարդացած աղբի համար: Էն... կյանքս կերել էր: Չգիտեմ, թե էդ, էդ ինչի համար էր. «Ընդհատակյա մարզկոմը գործում է», «Սպիտակ կեչին», «Մոսկվայից հեռու»: Էս ամբողջը դղրդալով ստալինյան մրցանակներ էին ստանում, մերոնք էլ դղրդալով թարգմանում ու տպում էին, ես էլ դղրդալով կարդում էի... Ոչինչ չի մնացել մեջս... Էս է: Այդպե՛ս:
Ասացի՞...

Գրի առավ Յուրի ԽԱՉԱՏՐՅԱՆԸ

* «Իվան Իլյիչի մահը»:
** ...սպիտակ վերնաշապիկ, մաքուր հրաշալի ատամներ, միշտ սիրալիր:
*** ...միշտ պատրաստակամ:
**** ...սպիտակ վերնաշապիկ, հրաշալի, մաքուր ատամներ, ¨ վերջ:
***** Գյուղագիր:
****** – Ձեր հերոսները նախատիպեր ունե՞ն:
– Մի՛շտ: Առանց նախատիպերի հնարավոր չէ:
– Ժամանակակից գրողներից ո՞վ է Ձեզ ոգով ավելի մոտ:
******* – Ուրեմն ո՞րն է լավ՝ էկզիստենցիալիզմը թե երեխան:
– Դա իմ վիպակից է, Լև Նիկիտիչ, եթե կարող եք՝ էկզիստենցիալիզմ ծնեք, դա ավելի լավ է, իսկ եթե չեք կարող էկզիստենցիալիզմ ծնել՝ ավելի լավ է երեխա ծնեք, իմ կարծիքով: Հիանալի է դա: Իսկ ահա մնալ այնտեղ, մեջտեղը՝ սարսափելի է:
******** – Դուք իմ ամենասիրած, հարազատ գրողն եք... Ո՞վ է Ձեր ամենասիրած գրողը: Ի՞նչ կասեք Բուլգակովի, Շուկշինի, Այթմատովի մասին:
********* «Եվ դարից երկար ձգվում է օրը»: